

## ՄԵԾ ՊԱՅՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ամեն տարի, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը Մեծ Պահքի օրերուն կը կազմակերպէ աւանդական ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին:

Այս տարի, ճաշի այս հանդիպումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 8 Մարտին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ, Արեւազալի արարողութենէն ետք:

Արեւազալի ժամերգութեան հանդիսապետեց Առաջնորդ Սրբազան հայրը եւ փոխանցեց իր պատգամը:

Ապա, կէսօրին, տեղի ունեցաւ ճաշի ձեռնարկը: Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամները պատրաստած էին Միջինքի յատուկ ճաշեր: Յայտագրին հանդիսավարն էր Տ. Օ. Մարմինի անդամ Տիկին Յուրիկ Ապտուլեան: Բանախօսն էր Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան: Օրհնութեան խօսք փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր մը:

## PRELACY LENTEN LUNCHEON

Every year, the Prelacy Ladies Auxiliary organizes a traditional Lenten luncheon under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

This year, the luncheon took place on Wednesday, March 8, at the St. Mary's Church hall in Glendale following Sunrise services, which were conducted by the Prelate.

For the luncheon, the ladies had prepared a special Lenten meal. Mrs. Hourig Abdulian of the Ladies Auxiliary emceed the event, with Very Rev. Fr. Barthev Gulumian giving the keynote speech and the Prelate communicating his blessings. The luncheon then proceeded with an artistic program.